



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

3-93  

---

5-72

523

524  

---

525

835  

---

C-72

14  
221

14 ✓



*[Faint, illegible handwriting]*

*[Faint, illegible handwriting]*

84

7-78

եր

# Թ Ջ Ո Ւ Կ

ԳՈՐԾ

Ա Լ Յ Ո Ն Ս Դ Ո Դ Է Ի

For the Trustees of the American Bible Society



ԹԱՐԳՄ.

Հ. ՏԷՐ-ՄԻՔԱՅԷԼԵԱՆՑ.



1569  
1569

2

Թ Ի Փ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ ՄՈՎՍՎԱՐԴԱՆԵԱՆՑ ԵՒ ԸՆԿ.

1881

6031

Ր Գ Ո Ջ Գ

Մ Գ Ո Ք

Կ Գ Ր Ո Ք Ս Յ Ո Յ Լ Ս

Доз. Цен. Тифлисъ. 27 Августа, 1881 г.

Մ Գ Ո Ք

Ք Գ Ր Ո Ք Ս Յ Ո Յ Լ Ս

Тип. М. Вартамянъ и К°, Троиц. пер. д. №11

ԱՅՍ ՓՈՔՐԻԿ ԱՇԽԱՏԱՆՔԸ

**ԻԻՐ ՀՕՐ ԵՂԵՕՐ**

ՄԻՔԱՅԷԼ ՏԷՐ-ՄԻՔԱՅԷԼԵԱՆՅԻՆ

Ն Ո Ւ Ի Բ Ո Ւ Մ Է

ԹԱՐԳՄԱՆԻՉԸ.

... րիսոց ծառայողները մասնակցեցին  
... անհրաժեշտ էր հարկերը հարկազան  
... անհրաժեշտ էր հարկերը հարկազան  
... անհրաժեշտ էր հարկերը հարկազան

Ա.

**Գ Ո Ր Ծ Ա Ր Ա Ն Ը**

Ես ծնուել եմ 18... թուականի Մայիսի 13-ին Լանգեդոսի մի փոքրիկ քաղաքում որ յայտնի է ինչպէս եւ ուրիշ հարուային քաղաքների մեծամասնութիւնը, ջերմութեան եւ լուսի առատութեամբ, փոշու բաւական քանակութեամբ, Քարմեւեանների անհրաժեշտ վանքով եւ երկու կամ երեք արձաններով, որոնք Հռոմայեցւոց հնութիւնների մնացորդներն են: Իմ հայրը էյստետ մականունով պարապում էր պատեանների առուտութեամբ: Քաղաքազրան մօտ նա ունէր մի մեծ գործարան, որի մի կողմից նա շինել էր տուել

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

մի գեղեցիկ տուն շրջապատած բազեղ-  
ներով եւ որ բաժանուած էր գործա-  
րանից մի մեծ այգիով: Այդ տան մէջ ես  
լոյս աշխարհ եկայ եւ նորա մէջ անցկացան  
իմ կեանքի առաջին երջանիկ տարիները:  
Այգին, բազեղները, գործարանը, այգ բոյո-  
րը մնացած է իմ մտքումը ընդ միշտ իբրեւ  
թանգագին յիշողութիւններ, երբ ես՝  
ծնողներու պատահած քամբաղտութիւ-  
նից յետոյ, պէտք է բաժանուէի այդ առ-  
արկաներից, ցաւում եւ տխրում էի նո-  
ցա վերայ, ինչպէս կենդանի էակն է վե-  
րայ:

Ամենից առաջ պէտք է ասել, որ իմ  
ծնունդը իրայ լէկա- էյասետների տանը:  
Մեր խոհարարուհի պառաւ Աննան յաճախ  
պատմում էր ինձ, թէ ինչպէս հայրս, որ  
այն ժամանակ ճանապարհորդում էր, ըս-  
տացաւ մի անգամից երկու լուր. 1) իմ  
աշխարհ գալը եւ 2) իւր՝ Մարսէյի պար-  
տապաններից մէկի անհետանալը, որ պարտ  
էր քառասուն հազար ֆրանկից աւելի:  
Այնպէս որ պ. էյասետը միանգամայն  
ուրախացած, եւ վշտացած, ինքն էլ չգի-

տէր լաց ինեյ իւր պարտքի վերայ, թէ  
ծիծաղել ուրախութիւնից փոքրիկ Ռանի-  
էլի Բարի աղապահն վերայ... լալ պէտք  
է բարի էյասետ. պէտք է լալ կրկնապա-  
տիկ...:

Իմ ծնունդը ծնողներու անբաղտու-  
թեան սկիզբն էր: Այդ ժամանակուանից  
անլուր անբաղտութիւններ սկսեցին թա-  
փուել ամէն կողմից: Մարսէյի կորուստից  
յետոյ մեր տանը մի տարուայ մէջ երկու  
անգամ հրդեհ պատահեցաւ, յետոյ կրծ-  
կող կին-բանուորների մէջ ապստամբու-  
թեան ցոյցեր երեւեցան. ապա մեր վէճը  
քեռի Բապտեստի հետ, գորանից յետոյ  
էլ թոնգ նստող դատը ներկալաճառնե-  
րի հետ եւ վերջապէս 18. թուականի յե-  
ղափոխութիւնը որ մեզ բալորովին բան-  
դեց:

Գործարանի գործերը օրէց օր վատ  
էին գնում: գործաւաները \*) փոքր առ փոքր

\*, «Фабрика» և «Мастерская» բառերը հայե-  
րէն թարգմանում ենք «գործարան» և «գործա-  
տուն» բառերով: Եւ որովհետեւ այդ բառերը

դատարկուում էին. ամէն շարաթ գործը քշանում էր. ամէն ամիս մնում էին աւելորդ եւ անպէտքացած նկարներ. դժուար էր տեսնել: Թէ ինչպէս կեանքը բաժանուում էր մեր տանից, որպէս հիւանդ մարմնից—դանդաղ եւ անընդհատ:

Մէկ օր կողպում էին երկրորդ յարկի սենեակների դռները, մի « օրը բանից երեւում էր. որ հարկաւոր չէ բակի մէջ այս կամ այն շէնքը:

Այդ վիճակը շարունակուում էր երկու տարի. երկու տարի տեւեց այդ հալու մաշ անող տագնապը: Աերջապէս բանուորները մի առաւօտ՝ չեկան, գործատուների զանգակը դադարեց հնչելուց, ջրհորը՝ ջուր բարձրացնող անիւի հետ դադարեց ճռընչելուց. մեծ աւազանի ջուրը, որտեղ լուացւում էին գործուածները, անշարժ մընաց եւ շուտով բոլոր գործարանում մընացին միայն պ. եւ տ. էյստեները, պառաւ Աննան, իմ եղբայր Ժակը եւ ես. դեռ մեզ շատ պէտք է պատահեն՝ մենք էլ ֆաճրիւքա բառը թարգմանում ենք գործարան՝ իսկ мастерская «գործատուն» բառով:

բակուումն էլ մնաց Կոլոմբ պահապանը իւր որդի Ռուժէի հետ, որ պահպանէ գործատները:

Ամէն բան վերջացած էր, մենք քանդուած էինք: Ես մեծանում էի հիւանդ եւ թոյլ, եւ այդ պատճառով ծնողներս չէին ուղում ուղարկել ինձ ուսումնարան:

Մայրս ինձ սովորեցրեց կարգալու գրելը, սովորեցրեց մի քանի իսպանական խօսքեր եւ երգել երկու կամ երեք երգ կիթառի նուագածու թեամբ: Այդ տեղեկութիւնների եւ տաղանդների շնորհիւ ես շուտով արժանացայ մեր ընտանիքի ծանօթ մարդկանց մէջ մի փոքրիկ հանճարի անուն ստանալու: Այդպէս կրթուելով ինձ հարկաւորութիւն չկար տնից հեռանալու եւ կամայ սկամայ ես կարող էի տեսնել ամենայն մանրամասնութեամբ էյստեանների տան դանդաղ տագնապը եւ կործանումն: Ես պէտք է խոստովանեմ որ, այս հանգամանքները ինձ այնքան չէին տրտմեցնում: Ես մինչ անգամ մեզ պատահած քամբադտութեան մէջ ինձ համար հաճելի կողմեր էի գտնում: Նորա շնոր-



հիւ ես կարող էի միշտ արձակ ժամանակս վազվզել բոլոր գործարանի մէջ ուր առաջ ինձ միայն կիրակէ օրերն էր թոյլատրուում:

Ես բոլորովին առանց կատակի ստուժ էի փոքրիկ Ռուժէին. «Այժմ գործարանը իմն է: Ինձ են տուել խաղալու»: Եւ նա հաւատում էր ասածիս: Եւ պէտք է աւելացնել, որ իմ բոլոր խօսքերին այդ տղան հաւատում էր:

Ի հարկէ տանը, մեծերը գործի վերայ նայում էին բոլորովին ուրիշ տեսակ: Մանաւանդ հայրս փոխուեցաւ եւ զարհուրելի դարձաւ: Նա առհասարակ դաժան եւ խիստ, բայց միեւնոյն ժամանակ մի շատ բարի մարդ էր, որ սիրում էր բարկանալ, մարդու վախեցնել եւ այնպէս անել, որ ամէնքը նորա շուրջը գողային: Անբաղտութիւնը փոխանակ նորան մեղմացնելու՝ գրգռել էր նորա այս բոլոր յատկութիւնները: Նա առաւօտուանից մինչեւ երեկոյ բարկանում էր եւ չգիտենալով ուժ վերայ թափել իւր բարկութիւնը՝ նեղանում էր արեգակի, եղա-

նակի, ծակի, Աննայի եւ յեղափոխութեան վերայ, մանաւանդ ամէնից աւելի՝ յեղափոխութեան վերայ:

Հօրս ասածին նայելով՝ կարելի էր մըտածել, որ 18...թուականի յեղափոխութիւնը, որի շնորհիւ մենք քանդուեցանք, միայն մեղ կործանելու համար էր սարքուած:

Եւ դուք կարող էք երեւակայել, որ էյասետների ընտանիքի անդամները, ի հարկէ, շատ բարեկամաբար չէին վերաբերում դէպի յեղափոխիչները: Աստուած միայն գիտէ, թէ ինչ բանում չէինք մեղադրում նոցա այն ժամանակ: Եւ մինչ անդամ, երբ ծեր էյասետ պապը (Աստուած դեռ շատ տարիներ պահպանէ նորան) զգում է յօգացաւի ուժգնութիւնները, նա դժուարութեամբ ձգվում է իւր երկայն բազկաթուռի վերայ եւ մենք լսում ենք ինչպէս նա ասում է. «Ո՛հ, այս յեղափոխիչները:»

Այն ժամանակը, որի վերայ ես խօսում եմ պ. էյասետը դեռ յօգացաւ չունէր: Բայց այն յուսահատութիւնը, որ տի-

րապետել էր նորան իւր քանդուիլը մըտաբերելիս, փոխեց նորա բնաւորութիւնը մինչեւ այն աստիճան, որ մենք ամէնքեանքս սկսեցինք նորանից քաշուիլ եւ երկիւղ կրել: Երկու շաբաթուայ ընթացքում երկու անգամ նորանից արիւն առան: Զորս կողմը ամէն բան լուում էր եւ մենք սեղանի վերայ շշուէնչ հանելով էինք խընդրում, որ մեզ հաց տան կամ կերակուր աւելացնեն: Մինչ անգամ նոցա մօտ լաց լինելն էլ երկիւղալի էր: Բայց հէնց որ նա տնից դուրս էր գնում՝ ամբողջ տան մէջ սկսում էր լաց, որ կարծես վերջ չ պէտք է ունենայ:

Ամէնքն լալիս էին:—մայրս, պառաւ Աննան, իմ եղբայր Ժակը եւ մեր մեծ եղբայր արբան, երբ նա գալիս էր մեզ մօտ:

Մայրս լալիս էր այն պատճառաւ, որ տեսնում էր հօրս յուսահատութիւնը եւ չէր կարողանում օգնել նորան, արբան եւ պառաւ Աննան լալիս էին տեսնելով տ. էյստէտի արտասուքները: Բայց ինչ վերաբերում է Ժակին—նա դեռ շատ փոքր էր, որ կարողանար հասկանալ մեր ան-

բաղտու թեան նշանակու թիւնը եւ միայն երկու տարով էր ինձանից մեծ—եւ նա լալիս էր միայն այն պատճառով, որ կամենում էր լալ իւր զուարճութեան համար:

Մի զարմանալի մանուկ էր իմ եղբայր Ժակը: Կարծես մի առանձին շնորհք ունէր լալու: Երբ ես նորան մտաբերում եմ, նա միշտ ներկայանում է իմ առաջը անփոփոխ կարմիր աչքերով եւ արտասուքի հեղեղները այտերի վերայ: Նա լալիս էր առաւօտը եւ երեկոյեան, ցերեկով եւ գիշերով, ուսումնարանումը եւ տանը, եւ զբօսանքի ժամանակ, լալիս էր միշտ եւ լալիս էր ամէն տեղ: Երբ նորան հարցնում էին թէ ինչ է պատահել նորան, նա պատասխանում էր հեծկտալով. «ոչինչ»:

Եւ զարմանալին այն էր, որ յիրաւի նորան ոչինչ չէր պատահել: Նա լալիս էր այնպէս հեշտութեամբ, ինչպէս Կոնգոյէն հարբուխով հիւանդացածները, միայն մի քիչ յաճախ, ահա՛ ամէնը: Երբեմն հայրս դոցա վերայ զայրացած՝ ասում էր

մեր մօրը. «Սա մի անտուր երեխայ է. նայիր ինդրեմ, դորա վերայ, մի անցամաքիլի առուակ է»:

Եւ մայրս առհասարակ պատասխանում էր մեզմ' ձայնով. «Ի՞նչ անենք» սիրելիս, նորա հասակ առնելու հետ այդ անց կրկենայ, նոցա տարիներումը ես էլ դոցա պէս էի»: Եւ ծակը աճում էր, նա բարձրանում էր հասակով, բայց այն այդը անց չէր կենում. ընդհակառակը՝ այս զարմանալի երեխայի տարօնինակ ընդունակութիւնը, այն է արցունք թափել, ամէն մի բանի համար, ըստ երեւոյթին, զօրանում էր օրէց օր:

Մեր ծնողների անբազումութիւնը նորան մի անտուր առիթ տուեց. եւ նա ազատ էր հեծկտալ ամբողջ օրերով եւ այժմ նորան ոչոք չէր ձանձրացնում հարցերով. թէ ինչ է պատահել նորան: Այդպէս մեր քանդուիլը ծակի համար, ինչպէս եւ ինձ համար՝ ունէր իւր լաւ կողմերը: Ինչ վերաբերում է ինձ՝ ես շատ երջանիկ էի: Ինձ վերայ ուշադրութիւն չէին դարձնում եւ այդպէս ես օգուտ էի քաղում այդ

հանգամանքներից եւ խաղում էի ամբողջ օրը Ռուժէի հետ դարտակ գործատներումը, որոնց մէջ մեր քայլերը արձագանք էին տալիս՝ ինչպէս եկեղեցումը, եւ որ տեղից մենք վազում էինք բակը, ուր արդէն սկսել էին մանր խոտեր աճել: Մատաղահաս Ռուժէն, Կոլումբ պահապանի որդին — մի հաստիկ երեխայ էր մօտ տասն ու երկու տարեկան, գոմէշի պէս ուժեղ, շան պէս հաւատարիմ, բազի պէս յիմար եւ նշանաւոր էր իւր շէկ խիտ մազերով, որոնց շնորհիւ նա ստացել էր իւր Ռուժէ (Rouge) մականունը: Բայց այստեղ ես պէտք է խոստովանեմ, որ Ռուժէն ինձ համար Ռուժէ չէր: Նա երբե՛մն իմ հաւատարիմ՝ Ուրբաթն էր, երբե՛մն վայրենի ջիլը, երբե՛մն նաւի ապստամբուած նաւաստիները եւ այն ամէնը, ինչ որ ես կամենում էի: Այդ ժամանակ ես ինքս էլ չէի անուանւում Գանիէլ Էյստեռ, ես այն գողանների մարթով պատած զարմանալի մարդն էի, որի արկածները ինձ խելքից հանում էին: Նրջանի՛կ երեւակայութիւն: Երեկոները ընթրիքից յետոյ ես կրկին ու

կրկին կարգում էի Ռոբինզոնը եւ սովորում էի անգիր: Առաւօտները եւ Ռոբինզոն էի խաղում եւ խաղում էի շատ եռանդով եւ ամէն բանի ինչ որ շըրջապատել էր՝ ինձ ստիպում էի մասնակցել իմ ներկայացմանը: Գործարանը այլ եւս գործարան չէր, դա իմ անբնակ կղզին էր (բոլորովին անբնակ — այդ ճ. մարիտ էր): Աւազանները իմ ուկիանոսն էր, այգին — իմ կուսական անտառն էր: Բազեղների մէջ կար մի մրջիւնանոց, որ նոյնպէս ունէր իւր նշանակութիւնը, որի վերայ ի հարկէ չէին կասկածում նորա բընակիչները:

Ռո ժէն իւր կողմից չէր կասկածում իւր գերի նշանակութեան վերայ: Եթէ նորան հարցնէիր, թէ ո՞վ էր Ռոբինզոնը, նորան ճ. մարիտ որ դժուարութեան մէջ կը ձգէիր: Չնայելով դորան՝ պէտք է ասեմ, որ նա կատարում էր իւր գերը բարեխղճութեամբ եւ ոչ ոք աշխարհիս երեսին չէր կարող նորա պէս ճ. մարտութեամբ նամանեցնել իւր ձայնը վայրենիների ազակներին եւ մռնչիւններին: Թէ ի՞նչպէս

էր նա ձեռք բերել այս ճարտարութիւնը, եւ չգիտեմ: Ինչ որ կարող եմ ասել, այն է որ նորա զարհուրելի հնչմունքը, որ նա հանում էր իւր կոկորդից, ցնցելով իւր շէկ մազերը՝ կարող էին երկիւղ բերել ամէնաքաջերի վերայ: Մինչ անգամ ես՝ Ռոբինզոնս, վախէնում էի եւ հարկադրում էի դադարեցնել նորան հծծելով. «Ռուժէ, խնդրեմ, մի քիչ կամաց, եւ վախենում եմ»: Ախա՜ս, Ռուժէն անօրինակ նմանեցնելով իւր ձայնը վայրենիների ազակների, գիտէր միեւնոյն ժամանակը երգուել ու հայհոյել ինչպէս հայհոյում են փողոցի տղաները:

Խաղալով նոցա հետ՝ եւ աննկատելի կերպով ընդունեցի նորա դարձուածքները եւ շարժուածքները: Մի անգամ՝ ճաշի ժամանակ բերանիցս յանկարծակի դուրս թռաւ մի վատ խօսք: Բնդհանուր շրիտթութիւն ընկաւ: «Ո՞վ սոխրեցրեց քեզ այդ, ո՞ր տեղ եւ լսել»: Այդ մի ամբողջ գէպք էր մերոնց համար: Հայրս առաջարկեց իսկոյն ինձ տալ դատախարակոյ հիմնարկութիւնը (исправительное заведе-

1002

մի)։ Իմ մեծ եղբայր արքան վճռեց, որ ամէնից առաջ ինձ պէտք էր խոստովանուել, որովհետեւ ես արգէն այն հասակումն էի, որ կարող էի խոստովանուել։ Ինձ տարան եկեղեցի։ Ես երբէք չեմ մեռանայ իմ առաջին խոստովանանքը։

Պէտք էր խղճմտանքի բոլոր անկիւններումը ժողովել հին մեղքերի կոյտը, որոնք հաւաքուած էին այնտեղ եօթ տարուայ միջոցում։ Այս հեշտ բան չէր։

Երկու գիշեր ես չէի կարողանում քնել։ Ինձանում հաւաքուեցաւ մեղքերի մի ամբողջ դէպ. ես առաջ ասացի ամենափոքրերը, բայց չէի կարող թաքցնել եւ ամէնամեծերը, եւ երբ ես ծուռնկ չոքած Ռիքոյէի քահանայի մօտ խոստովանում էի, ինձ թուում էր, թէ ես ահից ու ամօթից պէտք է մեռնեմ։

Այդ օրից ամէն բան վերջացաւ. ես այլեւս չէի ուզում խաղալ Ռուժէի հետ Իմ առաջին փորձն էր տուն վերադառնալիս յայտնել Ուրբաթին, որ նա այլ եւս աչքիս չերեւայ։ Ինչդձ Ուրբաթ։ Այս հրամանը կոտրեց նորա սիրտը բայց նա

հնազանդուեցաւ։ չհանելով բերանից ոչ մի գանգատ։ Երբեմն ես տեսնում էի նորան, նա կանգնում էր գործարանի դռնապանի պահնոցի մօտ վշտացած երեսով։ Հէնց որ նա նշմարում էր, որ ես նայում էի իւր վերայ, իսկոյն իմ գուլթը շարժելու համար, սկսում էր ամէնասահաւատալի հնչիւններ եւ զարհուրելի մըռնչիւններ հանել, թոթուելով միեւնոյն ժամանակը իւր հրաշէկ մազերը։ Բայց ինչքան աւելի էր նա մռնչում, այնքան նորա հանած ձայները ինձ անհաճելի էին եւ ես աղաղակում էի. «Կորի՛ր, կորի՛ր, դու այլ եւս ինձ հարկաւոր չես»։

Ռուժէն չյուսահատելով՝ չէր գաղարում այդպէս մռնչել մի քանի օր անընդհատ։ Բայց մէկ անգամ առաւօտը հայրս, որին ձանձրացրել էին այս վայրենի մռնչիւնները, ուղարկեց նորան սովորելու եւ ես այլ եւս նորան չտեսայ։ Բայց իմ հիացումն Ռոբինզոնի վերայ այդ անգամից յետոյ բոլորովին չնուազուեցաւ։ Ուղիղ այդ ժամանակը քեռի Բապտեստի թուլթակը ձանձրացրեց նո-

րան: ուստի եւ նա ինձ ընծայեց: Թու-  
թախը բռնեց Աւրբաթի տեղը: Ես նորան  
տեղաւորեցի մի գեղեցիկ վանդակի մէջ  
իմ ձմեռուան բնակարանումը եւ անցկաց-  
նելով ամբողջ օրեր այդ զարմանալի թռչնի  
հետ՝ զգում էի, որ իսկական Ռոբինզոնն  
եմ: Ես աշխատում էի սոսորցնել նորան  
արածասանել, «Ռոբինզոն» խեղճ Ռոբին-  
զոն»: Եւ դուք կարողէք երեւակայել, թու-  
թախը որ քեռի Բապտիստը տուել էր ինձ  
միայն այն պատճառով, որ ինքը ազա-  
տուի նորա մշտական ազազակներին, յա-  
մանութեամբ չէր ուղում խօսել այն օ-  
րին, երբ իմ ձեռքս ընկաւ. նա չէր ասում  
ոչ «իմ խեղճ Ռոբինզոն», ոչ էլ մի ու-  
րիշ խօսք: Այլ մի ժամանակ ես չկարո-  
ղացայ նորանից մի խօսք լսել: Բայց այդ  
ինձ չէր արգելում նորան շատ սիրելու  
եւ վերան հսկելու:

Մենք այդպէս խաղաղ երկար ապրում  
էինք թութակի հետ, բոլորովին առանձ-  
նութեան մէջ. երբ յանկարծ մի առաւօտ  
պատահեցաւ մի տարօրինակ դէպք: Այդ  
առաւօտը ես դուրս եկայ իմ հիւղից

բա ահան վաղ եւ զինուած տորից մինչեւ  
գլուխ՝ պատրաստուել էի մի քանի հեռա-  
դատութիւններ անելու իմ կողումը, երբ  
յանկարծ երեք չորս պարտն տեսայ, որոնք  
գալիս էին իմ կողմը եւ մի ինչ որ բա-  
նի վերայ խօսում էին միմեանց հետ: Ահա  
զարմանալի բան: Մարդիկ իմ կողմ վե-  
րայ: Ես հաղիւ կարողացայ թաքիենալ  
ժանկալարգերի (OIEANAPY) թփերի ե-  
տեւը: ... Նորա իմ մօտովս անցկացան  
բայց ինձ չնշմարեցին: Ես միայն կարո-  
ղացայ որոնիլ կտամբ պահապանի ձայնը,  
որ ինձ միքիչ հանգստացրէ:

Հէնց որ նորա միւս կողմը գնացին, ես  
դուրս եկայ իմ թաքնուած տեղից եւ  
հեռուից նայում էի նոցա վերայ, որ տես-  
նեմ՝ ինչ է լինելու վերջը:

Այդ անձանթները կանգնեցին իմ կող-  
ղումը: Նորա զննեցին նորան մէկ ծայ-  
րից մինչեւ միւսը ամենայն մանրամաս-  
նութեամբ: Ես տեսում էի, ինչպէս նորա  
մտնում էին այրերը եւ չափում էին իրանց  
գաւազաններով իմ ուլիկանոսի խորու-  
թիւնը: Ժամանակ առ ժամանակ նորա

կանգնում եւ շարժում էին իրանց գըլխները: Ես մի բանից էի վախենում, որ չլինի թէ իմ բնակարանը գտնէին: Չեմ կարող երեւակայել, թէ այն ժամանակ ինչ կպատահէր ինձ: Իմ բազուկը ոչինչ այդպիսի բան չպատահեցաւ եւ այդ պարոնները հեռացան, մինչ անգամ չկասկածելով, որ կղզու վերայ բնակիչներ կան: Հէնց որ նորա գնացին եւ ճանապարհ ընկայ դէպի իմ հիւղերից մէկը եւ այնտեղ անցկացրի բոլոր յօրը՝ վրդովուած մտածելով, թէ ովքեր էին այդ պարոնները եւ ինչի համար եկան: Ինչի համար եկա՞ն... Աւանդ, ես այդ շուտով իմացայ:

Երեկոյեան, ընթրիքի ժամանակ հայրս մեզ յայտնեց որ գործարանը ծախուած է եւ որ մի ամսից յետոյ մենք ամենեքեանքս կըգնանք բնակուելու Լիոնումը:

Դա մի խիստ հարուած էր: Գործարանը ծախուած է... Եւ ինչպէս... Բայց իմ կղզին, իմ այրերը, իմ հիւղերը...

Աւանդ, հայրս ծախեց կղզին էլ, այրն էլ, հիւղերն էլ, պէտք էր բաժանուել այդ

բոլորից: Աստուած իմ, ինչքա՞ն արցուքներ թափեցի ես...:

Մի ամսուայ ընթացքում, այն միջոցին երբ տանը դարում էին հայելիները եւ ամանեղէնները՝ ես մէնակ թափառում էի իմ սիրելի գործարանումը: Իհարկէ ես էլ սիրտ չունէի խաղալու այդ դուք հեշտ կարող էք երեւակայել...: Ես երկար նստում էի իմ սիրած զանազան տեղերում, նայում էի շուրջս եւ խօսում էի ինձ չըրջապատող առարկաների հետ, ինչպէս կենդանի էակների հետ: Ես ասում էի բազեղներին եւ աւազաններին. «Մնա՞ք բարեաւ, սիրելի բարեկամներս, մենք այլ եւս չենք տեսնուիլ»: Այգու խորքումը աճում էր մի մեծ նռնենի, կարմիր ծաղիկներով պատած: Ես մօտեցայ ծառին եւ փղձկալով ասացի. «տո՛ւր ինձ քո ծաղիկներից մինը»: Եւ նա տուեց ինձ: Ես վեր առայ եւ պահեցի ծաղիկը ի յիշատակ նորա: Ինձ այնպէս էր թւում, թէ ես ամենամանրագույն մարդն եմ աշխարհումս:

Բայց սաստիկ վշտի մէջ, երկու բան էին ինձ մի քիչ մխիթարում՝ առաջինը որ ես

ճանապարհորդելու եմ նաև ոչ եւ երկրորդը՝ որ ինձ թոյլ էին տալիս թուրքալը հետս վեր առնելու: Բայցի դորանից ես մտաբերեցի, որ ինքը Ռոբինզոնն էլ այդպիսի հանգամանքներում էր թողնում իւր կղզին... Այդ միտքը ինձ մի քիչ հանգստացրեց:

Վերջապէս բաժանման օրը հասաւ: Հայրս արդէն մէնակ մեր իրեղէնների մի մաստիք գնացել էր Լիոն եւ բնակւում էր այնտեղ: Ես ճանապարհ ընկայ մօրս՝ Թակի եւ պառաւ Աննայի հետ: Մեր մեծ եղբայր արբան մեզ հետ չէր գալիս, բայց նա մեզ ճանապարհ ձգեց մինչեւ կառքը: Աղումք պահապանը մեզ նոյնպէս ճանապարհ էր ձգում: Նա գնում էր ամէնից առաջ եւ տանում էր իւր առաջը մի ահագին սայլակի (TAKKA) մախազներով բարձած: Նորանից յետոյ գնում էր արբան մօրս ձեռքից բռնած:

Ահ, իմ խեղճ արբայ: Ես այն ժամանակ չէի նախագուշակում, որ նորան վերջին անգամն եմ տեսնում: Նորան հետեւում էր պառաւ Աննան ահագին մեծ

հովանոցով՝ Թակի հետ, որ չնայելով, որ ուրախ էր Լիոն գնալու պատճառաւ, բայց այսու ամենայնիւ չէր դադարում բոլոր ճանապարհին հեծկտալուց:

Վերջապէս գնացքը փակում էր Դանիէլ էյսսետը, նա գնում էր յամրաքայլ եւ տանում էր ձեռքին թուրքալի վանդակը եւ ամէն քայլափոխում կանգնում էր եւ յետ նայում, որ վերջին անգամ տեսնէ իւր սիրելի գործարանը:

Դանի քարաւանը հեռանում էր, նռնեւին աւելի ու աւելի էր բարձրանում այգու ցանկերի վերայ, կարծես այն պատճառով, որ նայէ նորա վերայ մի անգամ եւս...: Բաղեղները շարժում էին իրանց ճիւղերը՝ ի նշան հրաժարման...: Դանիէլ էյսսետը յուզուած ուղարկում էր նոցա օդային համրոյրներ...: Ես թողի իմ կղզին 18. թուականի Սեպտեմբերի 30-ին:





բաները չէ կարելի մոռանալ: Ազդեւորութիւնը շարունակուեցաւ երեք օր: Ես անց կացրի այդ օրերը նաւի տախտակամածի վերայ եւ գնում էի դահլիճը միայն ուտելու եւ քնելու: Մնացած ժամանակս ես անցէի կացնում նաւի քթի (խելք) վերայ կամ խարսխի մօտ: Այնտեղ էր գտնուում մեծ զանգակը, որ հնչեցնում էին քաղաքներին մօտենալիս կամ մտնելիս: Ես նստում էի այդ զանգակի մօտ պարանների շրջանների մէջ, դնում էի թութակի վանդակը ինձ մօտ եւ նայում էի: Գետը այնպէս լայնատարած էր, որ եզերքները հազիւ էին երեւում: Բայց ես կը ցանկանայի, որ նա աւելի լայն լինէր եւ անուանուէր «ծով»: Կապոյտ երկինքը ծիծաղում էր վերեւից եւ ալիքները փսյլում էին ու կանաչ գոյն էին ստանում ներքեւում: Ահագին վարքաները լողում էին հոսանքի ուղղութեամբ: Հեռաստանում, եզերքների վերայ երեւում էին նաւատուներ, որոնք երգելով գնում էին ջորիների վերայ նստած:

Երբեմն շոգեխաւը անց էր կենում մի

Բ.

**ՈՒՏԻՃՆԵՐԸ\*)**

Ո՛հ դուք, մանկութիւնս շրջապատող առարկայք: Ի՞նչպիսի անմոռանալի տրպաւորութիւն էք թողել ձեր ետեւը: Ինձ թւում է, թէ տակաւին երեկ էինք ճանապարհորդում Ռոնի վերայ: Իմ առաջեւս են թէ՛ շոգեխաւը, թէ՛ նորա վերայ ծառայողները եւ թէ՛ նաւորդները. ես դեռ լսում եմ թէ՛ սուր շվոցը, թէ՛ ջրի աղմուկը եւ թէ՛ շարժումն անիւների մէջ: Նաւապետին անուանում էին Ժէնիէ. իսկ խոհարարին՝ Մոնթելմար: Այդպիսի

\*) Тараканы.

որեւիցէ կղզու մօտոյ՝ որի վերայ աճել էին ուռիներ եւ եղէգներ: «Ահ Աստուած իմ սոքա ի հարկէ պէտք է անքնակ կղզի լինին»: Ինձ ու ինձ մտածում էի այսպէս՝ մինչեւ որ նոքա աչքիս այլ եւս չէին երեւում:

Երրորդ օրուայ վերջը ինձ թւում էր, որ անպատճառ մըրիկ է լինելու: Երկինքը յանկարծ թխպեցաւ: Թանձր մառախուղը տատանում էր գետի վերայ: Նաւի վերայ վառեցին մեծ լապտերը, եւ... ճշմարիտն ասած՝ ինձ վերայ երկիւղ ընկաւ...

Այդ ժամանակ մէկը ինձ մօտ ասաց. «Ահա եւ Լիոնը»: Այդ բոպէին մեծ զանգը հնչեց: Լիոնն էր:

Մառախուղի միջով ես դժուարութեամբ կարողանում էի նշմարել, ինչպէս այս ու այն եզերքներումը կայծեր էին փայլում: Մենք առաջ մի կամուրջի տակովը գնացինք, յետոյ երկրորդի եւ ամէն անգամ նաւի ահագին ծխնելոյզը թերւում էր երկու մասի եւ նորանից դուրս էին ժայթքում կայծեր ու ես ծուխ՝ որից ամէնքն էլ սկսում էին հազար:

Բայց նաւի վերայ երեւեցաւ մի աներեւակայելի իրարանցում: Ճանապարհորդները որոնում էին իրանց մախաղները, նաւաստիները հայհոյում էին միմեանց, գլորելով մթնումը ծանր տակառներ: Անձրեւում էր...: Ես շուտով գտայ մօրս, ժակին ու պառաւ Աննային եւ մենք չորս հոգով պինդ սեղմուեցանք միմեանց, աշխատելով ծածկուել մեծ անձրեւանոցովը: Այդ ժամանակը նաւը մօտեցաւ եզերքին եւ սկսուեցաւ նաւից եզերք անցկենայլը: Ինձ ճշմարիտ այնպէս էր թւում, որ՝ եթէ հայրս չգար մեր ետեւիցը, մենք ինքներս բոլորովին չէինք կարող դուրս գալ այդ խռնուած բազմութեան միջից: Նա մօտեցաւ մեզ գրեթէ խարխափելով եւ ձայն տուեց մեզ: մենք չորսներս էլ միաբերան նորան ձայն տուինք եւ ուրախացանք նորա վերայ՝ ինչպէս ազատչի վերայ: Հայրս շտապով համբուրեց մեզ ամէնիսբունեց մի ձեռքով եղբօրս ձեռքը՝ միւսով իմը՝ հրամայեց կանանց հետեւիլ իրան եւ մենք ճանապարհ ընկանք:

Մենք առաջ էինք գնում մեծ դժուար-

րութեամբ: Մութ գիշեր էր. մեր ոտքերը սահում էին կամուրջի վերայ: Ամէն մի քայլափոխում մեր ոտքերը հանգիպում էին զանազան առարկաների: Յանկարծ շոգենաւի միւս կողմից լսուեցաւ մի ճշող եւ միեւնոյն ժամանակը ողբագին ձայն: Ես լսեցի «Ռորինդո՞ն» Ռորինդոն»: Ահ, Աստուած իմ: Ես ուզում էի ձեռքերս ազատել հօրս ձեռքերից, բայց նա կարծելով, թէ ես սահուեցայ՝ աւելի ամուր էր սեղմում: Ձայնը կրկին կանչեց աւելի բարձր եւ աւելի ողբագին. «Ռորինդո՞ն» խեղճ Ռորինդոն»: Ես էլի սկսեցի դուրս քաշել իմ ձեռքը:— Այդ իմ թութակն է, աղաղակեցի ես, իմ թութակն է— ուրեմն նա այժմ սկսել է խօսել. հարցրեց ժակը:— Իհարկէ, իհարկէ, նա սկսել է խօսել, նորա ձայնը մի վերստից կարելի է լսել... Իրարանցման մէջ ես նորան մոռացայ նաւի քթի վերայ, խարսխի մօտ եւ նա ինձ կանչում էր այնտեղից, աղաղակելով բոլոր ուժովը. «Ռորինդո՞ն» Ռորինդոն, խեղճ իմ Ռորինդոն»:

Դժբախտաբար մենք շատ էինք հեռա-

ցել: Ժենիէ նաւապետը ամէնքին շտապեցնում էր:

— Մենք վաղը կըգանք նորան բերելու, ասաց հայրս ինձ մխիթարելու համար. շոգենաւի վերայ ոչինչ չէ կարող կորչիլ, շարունակեց նա: Եւ ջնայելով իմ արցունքներին, ինձ քաշեց իւր ետեւը:

Միւս օրը մարդ ուղարկեցինք թութակին բերելու, բայց նորան այնտեղ չբացտան: Կարող էք երեւակայել իմ յուսահատութիւնը: Այլ եւս ո՛չ Ուրբաթ կար, ո՛չ էլ թութակ, էլ չէր կարելի Ռորինդոն խաղալ: Բացի դրանից՝ միթէ մի որեւիցէ չնար կա՞ր ունենալ անբնակ կղզի Յոնարեան փողոցի մի խոնաւ ու աղտոտ տան չորրորդ յարկի մէջ:

Ո՛հ զարհուրելի տուն: Ես մինչեւ վերջին օրս նորան չեմ մոռանայ. վերելքը աղտոտ էր եւ սահուն. բակը նման էր ջրհորի. դռնապանը պարապում էր կօշկակարութեամբ եւ հէնց այնտեղ էլ ծախում էր իւր խանութի մէջ: Ամէն բան մարգու վերայ զգուանք էր բերում:

Երեկոյեան, մեր հասած օրը պառա-

Աննան զետեղուելով խոհանոցում՝ յանկարծ ձայն տուեց.— Աստուած իմ ուտի՛ճնե՛ր, ուտի՛ճնե՛ր: Մենք ամէնքս վազեցինք խոհանոցը եւ տեսանք մի զարհուրելի պատկեր: Ողջ խոհանոցը լիքն էր այդ զգուելի արարածներով. նորանցից շատ կային մառանումը, պատերի վերայ՝ արկղներումը, վառարանի եւ պահարանի վերայ: Մենք ոտքներս դնում էինք նոցա վերայ եւ սատակեցնում էինք անակնկալ ամէն մի քայլափոխում:

Աննան նոցանից բաւական շատ էր սատակեցրել, բայց ինչքան աւելի էր սպանում, այնքան աւելի էին նոքա դուրս գալիս:

Նոքա դուրս էին գալիս ջրի խողովակի ճեղքից, միւս օրը մենք ճեղքը կաշնեցինք: Բայց հետեւեալ օրը նոքա երեւացին միւս ճեղքերից: Վերջապէս մենք գրտանք մի կատու, որ որսում էր, նորանց եւ ամէն գիշեր մեր խոհանոցումը լինում էր մի ամբողջ որսորդութիւն: Ուտիճների պատճառաւ ես ատեցի Կոնը առաջին իսկ երեկոյից:

Միւս օրը այդ զգուանքը աւելացաւ. պէտք էր փոխել ճաշի եւ ընթրիքի ժամերը: Հացը այստեղ այնպէս չէր, ինչպէս մեզանում եւ սպիտակ հացը անուանուում էր «*խորնիտ*»:

Կարելի էր դորանից աւելի անմիտ անուն դնել: Մսի զանազան տեսակները նոյնպէս ունէին իրանց առանձին անունները եւ խանութների գործակատարները ծիծաղում էին պառաւ Աննայի վերայ, երբ նա խնդրում էր առաջուայ պէս: Մի խօսքով ամէն բանանախորժալի էր եւ տխուր:

Կիւրակէ օրը փոքր ինչ ժամանակ անցկացնելու համար մենք բոլոր ընտանեօք անձրեւանոցներով գնացինք ման գալու գետի եզերքում, եւ անզգայաբար գնացինք դէպի հարաւ:

— Ինչ որ էլ լինի, մի փոքր մօտ ենք մայրենի հողին, ասաց մայրս. նա տխրում եւ տանջւում էր ինձանից աւելի: Այդ ընտանեկան զբօսանքները ստացան վշտեցնող բնաւորութիւն: Հայրս միշտ վատ էր տրամադրուած. ժակը լալիս էր իւր

սովորութեամբ եւ կամաց կամաց գնում էր հօրս ետեւիցը: Ես չէի սիրում փողոց դուրս գալը. Կարելի է, այն պատճառ, որ մենք այժմն աղքատ էինք:

Մեր գալուց մի ամիս յետոյ պառաւ Աննան հիւանդացաւ: Մշտական մառախուղները վնասակար եղան նորա առողջութեան համար. պէտք էր նորան յետ ուղարկել հարաւ՝ նսւ շուտով վճռեց յուսահատութիւնից մարդու գնալ:

Աննայի գնալուց յետոյ մենք նորա աղախնին չվարձեցինք եւ ինձ թւում էր, որ մենք աղքատութեան ամէնաբարձր աստիճանին ենք հասել: Դռնապանի կինը գայիս էր կոշտ գործերի համար, մնացածը անում էր մայրս եւ փչացնում ու այրում էր վառարանի մօտ իւր քնքուշ ու սպիտակ ձեռքերը: որ այնպէս շատ իէ սիրում համբուրել: Ժակը պէտք է գնէր պաշարեղէնները. նորա ձեռքից կախում էին կողովը եւ հասկացնում էին, թէ ինչ եւ սրտեղ պէտք է առնել, եւ նա գնում էր շատ յաջող, չնայելով որ միշտ լայիս էր ըստ իւր սովորութեան:

Խեղճ ժակ: Նա էլ ուրախ չէր: Հօրս դարմացնում էին նորա մշտական արցունքները եւ նա սկսեց դէպի նա անարդար վերաբերուել եւ միշտ հրել ոտքով: Ամբողջ օրը միայն լսում էր. «ժակ՝ դու յիմար ես. ժակ՝ դու աւանակ ես»: Եւ դորա շնորհիւ ժակը հօրս ներկայութեամբ իրան բոլորովին կորած էր զգում: Եւ այն ջանքերը, որ նա անում էր արցունքները զսպելու, փչացնում էին նորա դէմքը, եւ նա սաստիկ վախից կորցնում էր իւր ուշք ու միտքը: Ամէն մի ընդհարումն հօրս հետ՝ վերջանում էր նորա համար անբաղտութիւնով: Ահա զօրօրինակ փարչին պատահած երեւելի պատմութիւնը:

Մի անգամ երբ ամէնքս նստում էինք ընթրելու, մէկը յանկարծ ասաց, որ ողջ տանը մի կաթիլ անգամ ջուր չկար: — Եթէ կամենաք, ես կգնամ ջուր բերելու, ասաց ժակը: Եւ նա վերառաւ փարչը. դա մի մեծ քարէ փարչ էր: Հայրս ուսերը շարժեց:

— Եթէ ժակը գնայ, ես հա-

լատացած եմ: որ փարչը կոտորուելու է:

— Լսում ե՞ս: Ժակ, ասաց մայրըս իւր մեղմ ձայնով: լսում ե՞ս: տես, չկոտրես: զգո՛յ՛ջ կաց:

— Ասելն աւելորդ է, պատասխանեց Հայրս: նա կը կտորի:

— Բայց ի՞նչու էք դուք անպատճառ կամենում: որ ես կոտորեմ, խղճալի ձայնով ասաց Ժակը:

— Ես քեզ չեմ ասում: որ դու պէտք է կոտրես. բայց ես ասում եմ որ կը կոտրես: ասաց Հայրս մի այնպիսի ձայնով, որ չէր կարելի պատասխանել նորան: Ժակը ոչինչ չպատասխանեց, նա բռնեց փարչը դողդոջուն ձեռքերով եւ գնաց՝ կարծես ուղեւալով ասել. — Ի՞նչ, ես կը կոտրեմ... լա՛ւ, տեսնե՛նք: Անց է կենում հինգ ըոպէ, տաս ըոպէ, Ժակը չէ վերադառնում: Մայրս սկսում է անհանգստանալ:

— Արդեօք նորան ոչինչ չէ՞ պատահել, ասում է:

— Ո՛չինչ, նորան ոչինչ չէր կարող պատահել, պատասխանեց Հայրս: նա

կոտրել է եւ վախենում է տուն գալ:

Ասելով այս բարկացած ձայնով, Հայրս վեր կացաւ եւ դուրս գնաց որ տեսնէ թէ ի՛նչ է պատահել Ժակին: Նա շատ հեռու չպէտք է գնար: Ժակը կանգնած էր սրահումը դռների մօտ ցած թողած դատարկ ձեռքերով եւ քարացած երեսով: Հօրս տեսնելով՝ նորա գոյնը փոխւում է եւ նա կցկտուր խօքերով ասում է կամաց, կամաց, այնպէս կամաց, որ հազիւ կարելի է որոշել. «Կոտորուեցա՛ւ»:

Մենք արդէն երկու ամիս էր, որ բընակուում էինք Լիոնումը՝ երբ մեր ծնողները մտածեցին մեր ուսման վերայ: Հայրս մեծաւ ուրախութեամբ մեզ կրտար ուսումնարան, բայց այդ շատ թանգ էր նստում: Պատահմամբ մեր ընտանիքի բարեկամներից մէկը, հարաւային համալսարանի վերատեսուչը գրեց Հօրս, որ եթէ նա կամենում է, կարողեն նորա որդեւրանցից մէկին ընդունել Լիոնի ուսումնարանումը թոշակառու աշկերտների շարքումը:

— Դանիէլին տանք, ասաց Հայրս:

— Իսկ ժակին՝ Հարցրեց մայրս:

— Ժակին ես կրթողնեմ ինձ մօտ: Նա ինձ օգտակար կըլինի. բացի դորանից՝ ես նորանուժ տեսնուժ եմ սէր զէպի վաճառականութիւն: Մենք նորան վաճառական կըլինենք:

Դժուար է ասել, թէ ինչպէս էր Հայրս նորանուժ նշմարում սէր զէպի վաճառականութիւն: Այն ժամանակը խեղճ երեխան ունէր միայն սէր, այդ էր՝ սէր զէպի արյունքները եւ եթէ նորան Հարցնէին... բայց իհարկ է ոչոք մեզ չէր Հարցնում: մի նորան, ո՛չ էլ ինձ:

Երբ ես առաջին անգամը գնացի ուսումնարան, ինձ ամէնից առաջ ապշեցրեց այն՝ որ միայն ես էի բաճկոն (ՍΠΙՅՅΑ) Հագած: Լիոնում Հարուստ ծնողների որդիքը բաճկոն չեն Հագնում: Ես Հագած ունէի կարճ բաճկոն շերտերաւոր կտորից, որ գործուած էր մեր գործարանումը: Երբ ես մտայ դատատուն, սկսեցին ծիծաղել եւ ասել. «Նայեցէ՛ք, նայեցէ՛ք, բաճկոն է Հագել: Ուսուցիչն ինձ տեսնելով՝ երեսը ծըռմուտեց եւ նոյն րոպէին ինձ չ սիրեց:

Եւ այն ժամանակուանից ինձ դառնալով, նա միշտ խօսում էր բարձրից. մինչ անգամ՝ նաեւ չնայելով ինձ վերայ արհամարանքով: Նա ո՛չ մի ժամանակ ինձ մականունովս չէր կանչում: այլ միշտ ասում էր. «Է՛յ դու... ի՛նչպէս է քո անունը... Թ՛զմէկ...» Չնայելով որ ես քսան անգամ կրկնել էի նորան, որ իմ անունը Բանիէլ է յստեօ է: Ընկերներս էլ սկսեցին ինձ անուանել թզուկ. «Թզուկ» անունն էլ վերաս մնաց: Ատելի՛ բաճկոն, ամէն բանում՝ նա է մեղաւոր:

Սակայն բացի իմ բաճկոնից՝ ես նոյնպէս ամէն բանում էլ զանազանում էի իմ ընկերներիցը: Ամէնքը ունէին գեղեցիկ թղթապահներ գեղին կաշուց, հիւնալի թանաքամաններ հոտաւէտ փայտից եւ նոր կազմած տետրակներ: Իրքերը նոյնպէս նոր էին եւ բոլորը վերջին տպագրութեան: Բայց իմ գրքերը գնում էին հին գիրք վաճառողներից գետեզրի վերայ: Նոքա-հին էին եւ քրքրուած, պատուում կազմերով, դուրս գջուած թերթերով: Նոցանից միայն ներքնատան հոտ էր փը-

չում: Թակը մեծ աշխատանքով սոսնձում էր այդ գրքերը ինձ համար եւ կազմում էր հաստ կազմով: Նա սոսինձ շատ էր ածում եւ գրքերիցն էլ սոսնձի հոտ էր փչում: Նա շինեց ինձ համար նոյնպէս մի թղթապահ բազմաթիւ բաժանմունքներով եւ գրպաններով, որ շատ յարմար էր, բայց նոյնպէս շատ սոսնձած: Այդ ժամանակից Թակը յտիշտակուեցաւ նոր աշխատանքով եւ սոսնձելու կարեւորութիւնը նորա համար այնքան սիրելի դարձաւ, որքան սիրելի էր լացը: Միշտ վառարանի մօտ դրուած էր ամէն տեսակ ամանեղէններ սոսնձով լցուած եւ երբ նորան յաջողւում էր խանութից դուրս գալ, նա այն բոլորէն սկսում էր սոսնձել ու կազմել: Մնացած ժամանակը նա տանում էր քաղաքի զանազան տեղերը գնորդների գնած իրերը, առնում էր պաշարեղէնները, գրում էր թելագրութեամբ, մի խօսքով պարապում էր վաճառականութեամբ:

Ինչ վերաբերում է ինձ, ես չուտով հասկացայ, որ թոշակառու եւ միեւնոյն

ժամանակը կապոյտ բաճկոնով եւ Բլաւանուանուած աշկերտը պէտք է աշխատէր կրկնապատիկ, քան միւսները, որ ինչքան կարելի է՝ հաւասարուի միւսներին: Եւ թղուկը սկսեց աշխատել բոլոր ուժով:

Քաջ գիւմի թղուկ: Այս բոլորէն ես տեսնում եմ թէ ինչպէս նա ձմեռ օրով նստած է իւր ցուրտ, չվառուած սենեակում, սեղանի առաջ, տաք վերմակը ոտքերին: Դրսից սառնամանիքը նկարներ է ձգում ապակիների վերայ: Ներքեւից, խանութի միջից լսւում է ինչպէս հայրս թելագրում է:

«Ես ստացայ ձեր պատուական նամակը այս ամի 8-ին»:

Եւ Թակը լալագին ձայնով կրկնում է:

«Ես ստացայ ձեր պատուական նամակը այս ամի 8-ին»:

Ժամանակ առ ժամանակ դուռը կամաց բացւում է— մտնում է մայրս. նա մատների վերայ մօտենում է թղուկին...

— Դու սովորում ես, հարցնում է նա:

— Այո՛, մայրիկ:

— Արդեօք չե՞ս մրսում:



— Ո՛չ, Ո՛չ:

Թողուկը սուտ է խօսում: Իսկ շատ է միտում: Մայրս նստում է նորա մօտ կարը ձեռքին եւ սպասում է երկար ժամանակ կամաց համբելով հանգոյցները եւ երբեմն «ախ» քաշելով:



Գ.

## Մ Ե Ռ Ա Ի

աղօթեցէ՛ք նորա համար:

Այս պատահեցաւ յուլիս ամսի երկու-  
շաբթի օրերից մէկումը:

Այդ օրը գուրս գալով ուսումնարանից՝  
ես ընկերներիս հետ փողոցումը խաղի ե-  
տեւից ընկայ եւ երբ վերջապէս մտաբե-  
րեցի տունը, այնպէս ուշ էր, որ ես բո-  
լորովին զարմացայ: Ես առանց շունչ սռ-  
նելու վազեցի հրապարակից մինչեւ Ֆո-  
նարեան փողոցը, գլխարկս ձեռքիս եւ  
գրքերս կապած գօտկումս՝ աւելի հեշտ  
վազելու համար: Ես սաստիկ վախենում  
էի հօրիցս:

Վերելքի վերայ ես մի բոպէ կանգնեցի,  
որ շունչ առնեմ եւ միեւնոյն ժամանա-

կը հնարեմ մի որեւիցէ պատմութիւն իմ ուշ գալուս պատճառը մեկնելու համար մտածեցի ու զանգը քաշեցի:

Հայրս ինքը դուրս եկաւ դուռը բանալու:

— Ի՞նչու այդքան ուշ? Հարցրեց նա:

Ես սկսեցի պատմել իմ հնարածը. բոլոր մարմնովս դողալով, բայց նա ինձ թոյլ չտուեց վերջացնելու, բարձրացրեց ինձ, սեղմեց իւր կրծքին եւ երկար ու լուռ համբուրում էր:

Ես սպասում էի գոնէ խիստ յանդիմանութեան եւ այդ ինձ շատ զարմացրեց:

Առաջ ես այն իմացայ, որ մեր տանը ճաշում է Սին—նիչէի քահանան. ես փորձով գիտէի, որ այդպիսի օրերումը մեզ չէին պատժում: Բայց մտնելով սեղանատունը, ես նոյն բոպէին զգացի, որ սրխալուած էի: Սեղանի վերայ կար միայն երկու սպաս—ինձ ու հօրս համար:

— Բայց ո՞րտեղ է մայրիկը, որտեղ է Ժակը, հարցրի ես զարմացմամբ:

Հայրս պատասխանեց ինձ այնպիսի մեղմ ձայնով, որ դեռ չէի լսել նորանից:

— Մայրդ ու Ժակը գնացել են, Գանիէլ, քո մեծ եղբայրը փոսնգալի հիւանդ է: Նշմարելով որ իմ գոյնը բոլորովին գրնաց այդ խօսքերը լսելուց, նա աւելացրեց գրեթէ ուրախ ձայնով, որ ինձ հանգարտեցնէ:

— Ոչինչ, մի վախենար, գուցէ փոսնգը փոքր լինի: Մեզ գրել էին, որ նա անկողնումը պառկած է, քեզ յայտնի է մօրդ բնաւորութիւնը, նա ցանկանցաւ գնալ եւ ես Ժակին նորան ուղեկից դրի: Աստուած կըտայ, ամէն բան լաւ անցկուկենայ...: Իսկ հիմայ, նստի՛ր ճաշենք. ես քաղցած մեռնում եմ: Ես նստեցի ոչինչ չասելով, բայց իմ սիրտը շատ անհանգիստ էր եւ ես մեծ ոյժ էի գործ դնում, որ ամէն բոպէ լաց չլինեմ մտածելով որ եղբայրս հիւանդ է: Ճաշը տխուր անցկացաւ մենք լուռ նստած էինք միմեանց հանդէպ: Հայրս ուտում էր շտապով խմում էր մեծ ումպերով, յետոյ յանկարծ մտածման մէջ էր ընկնում եւ մոռանում էր ուտելը: Ինձ վերայ նոյնպէս ապշութիւն եկաւ: Ես անշարժ նստած

էի սեղանի միւս ծայրին եւ մտաբերում էի այն բոլոր գեղեցիկ պատմութիւնները՝ սր պատմում էր արքան գործարան գրնալիս: Ես երեւակայում էի, ինչպէս նա արագ հաւաքում էր իւր փիղոնը՝ աւազանները անցկենալու համար, եւ մտաբերեցի այն օրը, երբ նա առաջին անգամ եկեղեցում պատարագ էր մատուցանում: Մեր բոլոր ընտանիքը հաւաքուել էր ներկայ լինելու այդ առաջին ժամասացութեան: Նա ինձ շատ գեղեցիկ երեւեցաւ, երբ շուր եկաւ դէպի մեզ, ձեռքերը տարածելով ու ազօթք ասեց այնպիսի հիանալի մեղմ ձայնով, որ մայրս ուրախութիւնից լալիս էր: ... Եւ յետոյ երեւակայեցի նորան հիւանդ՝ անկողնումը պառկած...: Ես գիտէի, որ նա սաստիկ հիւանդ է, մի բան ինձ համոզում էր դորանում: Ե, որ ամէնից զարհուրելին է, այդ այն էր, որ մի ներքին ձայն չէր դադարում ասելուց: «Այդ քոյ յանցանքնէ: Աստուած պատժում է քեզ, տուն մտնելիս սուտ չպէտք է խօսէիր»: Եւ խեղճ Թըրզուկը յուզուած այն մտքով որ Աստուած

նորան պատժելու համար կը մեռցնի իւր եղբօրը, յուսահատութեամբ կրկնում էր ինքն իրան. «Ո՛չ երբէք, երբէք, ես չպէտք է խաղամ դասիրեց յետոյ տուն վերադառնալիս, ո՛չ երբէք: Ճաշից յետոյ վառեցի ճրագը. երեկոյացաւ: Հայրս ճաշից յետոյ Սեղանի վերայ բաց արեց վաճառականական հաստ մատեանները եւ ըսկսեց հաշուել բարձր ձայնով: Ֆինէ կատուն» որ բռնում էր ուտիճները՝ ողբագին մըլաւում էր եւ քորւում էր սեղանի մօտ... Ես պատուհանը բաց արի եւ նստեցի մօտը:

Գիշեր էր: Սղը մուսյլ էր: Ներքեւից լսելի էր տան մօտ նստած մարդկանց ծիծաղը եւ խօսակցութիւնը. հեռու, մի տեղ թմբկահարեցին: Ես նստած էի այդպէս մի քանի րոպէ, մտածելով տխուր բաների վերայ եւ աննպատակ նայելով շրջապատած մթու թեան վերայ, յանկարծ սաստիկ հնչեցրած զանգակը ինձ ստիպեց տեղիցս վեր ցատկել: Ես նայեցի հօրս վերայ եւ ինձ թուեցաւ, որ նորա երեսին էլ կար նոյն վրդովմունքի եւ ահի արտա-

յայտութիւնը, որ ինձ տիրել էր: Այդ  
զանգակը նորա վերայ էլ էր ահ բերել:

— Զանգակը խփում են, ասաց նա  
ինձ շատ կամայ:

— Սպասեցէք, հայրիկ ես կըգնամ: Եւ  
վազեցի գէպի դուռը: Դրան շեմքին կանգ-  
նած էր մի մարդ կէս լուսի, կէս խա-  
ւարի մէջ. ես կարողացայ նորան նշմա-  
րել. նա ինձ տալիս էր մի բան, բայց  
ես վախենում էի ձեռքից առնել:

— Հեռագիր է, վերջապէս ասաց նա:

— Հեռագիր, Աստուած իմ ինչ պէտք  
է լինի:

Ես վեր առայ բոլորովին դողալով ու  
կամենում էի դուռը փակել, բայց այն  
մարդը ոտքով դուռը բռնեց եւ ասաց ինձ

— Պէտք է ստորագրել:

Պէտք էր ստորագրել, ես այդ չգիտէի:  
Այդ առաջին հեռագիրն էր, որ ես ստա-  
նում էի:

— Ո՞ր է, Դանիէլ, հարցրեց հայրս.  
նորա ձայնը դողում էր:

— Ոչինչ, մէկը եկել էր... մուրացկան  
էր: Եւ նշան տալով եկողին, որ ինձ

սպասէ, ես վազեցի սենեակս, թաթախե-  
ցի գրիչս թանաքամանումը ու վերագար-  
ձայ:

— Այստեղ ստորագրեցէք, ասաց նա:  
Թղուկը ստորագրեց դողդոջուն ձեռքե-  
րով վերելքը լուսաւորող ճրագի լուսով:  
Յետոյ նա փակեց դուռը եւ վերագար-  
ձաւ սենեակը, պինդ թաքցնելով հեռա-  
գիրը բաճկոնակի տակը:

Այն ես քեզ լաւ թաքցրի, իմ Բաճկո-  
նակի տակ, անբաղդութեան հեռագիր:  
Ես չէի ուզում, որ հայրս քեզ տեսնէր:  
Ես առաջուց նախագուշակում էի որ դու  
մեզ մի զարհուրելի բան պէտք է ասես,  
երբ քեզ բաց արի, դու ինձ ոչինչ նոր  
բան չասացիր, լսում ես ոչինչ այնպիսի  
բան, որ իմ սիրտը առաջուանից չլինէր  
նախագուշակում:

— Այդ եկողը մուրացկան էր, հար-  
ցրեց հայրս, նայելով ինձ վերայ:

— Այն, մուրացկան էր, պատասխանեցի  
հանդարտ: Եւ բոլորովին նորան հանդար-  
տեցնելու համար նստեցի իմ առաջուան  
տեղումս: Ես այնպէս նստած էի մի քա-

նի ժամանակ առանց շարժուելու, առանց մի խօսք ասելու, սեղմելով կրճքիս այն թղթի կտորը, որ ինձ այրում էր:

Այնպիսի բուպէներ էին լինում, որ աշխատում էի հանգարտեցնել ու բաջալերել եւ ասում էի ինձ ու ինձ. «Ո՞ր գիտէ՞ կարելի է լաւ լուր լինի: Վարելի է գրում են, որ նա առողջացել է...»: Բայց իմ սրտիս խորքումը ես զգում էի, որ այդ սուտ է, որ դորանով ես միայն ինձ եմ խաբում: ոչ չէր կարելի, ոչ հեռագրումը ասուած լինէր, թէ նա առողջացել է:

Վերջապէս ես վճռեցի գնալ իմ սենեակը եւ այնտեղ ուղիղն իմանալ, թէ բանը ինչն է: Ես դուրս եկայ սեղանատնից, Բայց ոչինչ ցոյց չտալով: Իսկ երբ ես մտայ իմ սենեակը, ինչ արագութեամբ վառեցի ճրագը, ինչպէս էին գողում ձեռքերս, երբ բաց էի անում այդ մա հուան լուր բերող հեռագիրը: Եւ սրբան ջերմ արցունքներ թափեցի նորա վերայ, երբ վերջապէս կարգացի...: Ես կրկին ու կրկին կարգում էի շատ անգամ միշտ

յուսարով, որ գուցէ տեսնեմ ուրիշ բառեր, որ գուցէ կարելի էր ուրիշ միտք տալ այդ խօսքերին... Իզո՞ւր ես չկարողացայ ստիպել նորան ասել ուրիշ բան. բացի նորանից, ես առաջուց հաստատ գիտէի, ինչ որ նա մեզ պէտք է ասէր:

«Մեռա՛ւ: Ազօթեցէ՛ք նորա համար»: Զգիտեմ ինչքան ժամանակ կազնած էի այսպէս արցունքները աչքերիս՝ նայելով առաջեւս դրած բաց հեռագրի վերայ: Միայն այն գիտեմ, որ ես պէտք է երեսու լուանայի պաղ ջրով: Գորանից յետոյ ես վերագարձայ սեղանատունը, հեռագիրը ամուր սեղմելով իմ փոքրիկ ձեռքիս մէջ:

Ինչ պէտք էր այժմ անել: Ինչ խօսքերով պէտք էր յայտնել այս զարհուրելի լուրը հօրս եւ ինչ երեխայութիւն էր թաքցնել այդ նորանից: Վաղ թէ ուշ պէտք էր ասել. ինչ անմտութիւն իմ կողմից: Եթէ ես ուղղակի գնայի հօրս մօտ, այն ժամանակը, երբ ստացայ հեռագիրը, մենք գոնէ միասին բաց կանէինք եւ այժմ ամէն բան յայտնի կըլինէր:

Մտածելով այդ բոլորի վերայ, ես մօ-

տեցայ սեղանին եւ դիտմամբ նստեցի  
 Հօրս մօտ, ինչքան կարելի էր, մօտիկ:  
 Խեղճը վերջացրել էր իւր հաշիւները.  
 Ճածկել էր մատեանները եւ խաղում էր  
 Ֆինէի հետ, կամաց խտրտելով գրչի ծայ-  
 րով նորա սպիտակ բերանը:

Իմ սիրտը կտոր կտոր էր լինում այդ  
 խաղը տեսնելիս: Ես նայում էի նորա  
 քաղցր դէմքի վերայ, որ կիսով չսփ լու-  
 սաւորուած էր ճրագի լուսով. նա ժամա-  
 նակ առ ժամանակ ոգի էր առնում եւ  
 ժպտում: Եւ ես ամէն բոպէ ուզում էի  
 ասել. «Ո՛չ, ո՛չ, միք ծիծաղի. խնդրեմ  
 այդպէս միք ծիծաղի»:

Ես տխուր նստած էի հեռագիրը ձեռ-  
 քիս: Յանկարծ նա գլուխը բարձրացրեց:  
 Մեր հայեաղքները պատահեցան միմեանց:  
 Չգիտեմ ինչ տեսաւ նա իմ աչքերումը,  
 բայց նորա կերպարանքը փոխուեցաւ,  
 կրճքից գուրս թռաւ մի զարհուրելի ա-  
 ղաղակ եւ նա ասաց ինձ մի այնպիսի  
 ձայնով, որ մարդու սիրտ էր կտրատում:

— Մեռա՛ւ, ճշմարիտ է:

Հեռագիրը իմ ձեռքիցը վայր ընկաւ,

եւ փաթթուեցայ նորան եւ մենք երկար  
 լալիս էինք: Բայց ոտքերի մօտ Ֆինէ կա-  
 տուն, խաղում էր հեռագրի հետ, այն  
 զարհուրելի հեռագրի հետ, որ մեր ար-  
 ցունքներն պատճառն էր դարձել:

Լսեցէք. ես չեմ խաբում շատ ժամա-  
 նակ է անցել այն օրից, երբ պատահել է  
 այս, ինչի վերայ որ գրում եմ այժմ,  
 շատ ժամանակ է, վաղուցէ որ նա՛ իմ  
 սիրելի արբան, որին ես շատ սիրում էի,  
 քնած է հողի տակը. բայց դեռ այսօր էլ,  
 երբ ստանում եմ մի որեւիցէ հեռագիր,  
 չեմ կարողանում բաց անել առանց ահ  
 ու դողի. ինձ միշտ թւում է, թէ ես այն  
 բոպէին կարգալու եմ, որ նա մեռաւ եւ,  
 որ հարկաւոր է աղօթել նորա համար:



Դ.

## Կ Ա Ր Մ Ի Ր Տ Ե Տ Ր Ա Կ Ը

Խաչելութեան պատկերի վերայ միշտ կարելի է նկատել Աստուածածնայ վշտաբեկ դէմքը խորշոմներով ծածկուած: Նոյնը կարելի էր տեսնել նա եւ մեր մօր վշտամաղ դէմքի վերայ, երբ նա վերագարձաւ արբայի թաղումից յետոյ: Խեղճ մայր: Այդ ժամանակուանից նա դադարեց ժրպտալուց: Նա այնուհետեւ սկսեց սեւ շոր հագնել եւ նորա երեսը միշտ տխուր էր: Այդ խորին հոգեկան սուգը շարունակուում էր այդ ժամանակուանից մինչեւ նորա կեանքի վերջը...: Բայց միւս բոլոր բաները էյստետների տանը անփոփոխ մընացին. սակայն ինձ այնպէս էր թւում, թէ

ամէն բան դարձաւ աւելի մռայլ եւ աւելի տխուր քան առաջ: Սեն—Նիչէի քահանան մի քանի անգամ հոգեհանգիստ կատարեց արբայի հոգու համար: Երեխաների համար կարեցին սեւ շորեր հօրս հին վերարկուից, եւ տխուր, գործունեայ կեանքը հոսեց առաջուայ պէս: Անցել էր մի քանի ժամանակ մեր սիրելի արբայի մահից յետոյ, երբ յանկարծ մի երեկոյ, երբ մենք պառկում էինք քնելու, ծակը մօտեցաւ մեր սենեակի դրներին եւ երկու անգամ բանալիով փակեց, յետոյ նա փակեց բոլոր ձեղքերը եւ այդ ամէնը անելուց յետոյ՝ մօտեցաւ ինձ խորհրդաւոր դէմքով: Ես նայում էի նորա վերայ դարմացմամբ:

Պէտք է ասել, որ ծակի՝ հարաւ գնալուց յետոյ, նորան մեծ փոփոխութիւններ էին պատահել: Ամէնից առաջ, որ ձեզ անհաւատալի կը թուի, նա դադարեց լալուց, այսինքն գրեթէ դադարեց, յետոյ նորա չափազանց սէրը դէպի ստորնձերը նոյնպէս անցկացաւ: Փորրիկ ամանները սոսնձով լցուած գեռ եւս դրուում

էին կրակի վերայ: բայց ոչ առաջուայ ե-  
ռանդով: եւ մի թղթապահ ստանալու  
համար այժմ գրեթէ պէտք էր աղաչել  
ու պաղատել ծնկաչոր...: Անհաւատալիէ,  
բայց ճշմարիտ է: Մինչ անգամ թղթէ  
արկղը որ մայրս պատուիրել էր շինել  
զլխարկների համար, սոսնձուում էր մի  
ամբողջ շաբաթ...: Տանը մեծերը այդ  
չէին նշմարում: բայց ես լաւ էի տես-  
նում: որ ժակին մի բան է պատահել:  
Մի քանի անգամ խանութ մոնելիս տե-  
սել եմ: ինչպէս նա խօսում է ինքն ի-  
րան, շարժելով ձեռքերը: Գիշերները նա  
չէր քնում, ես լսում էի, ինչպէս նա  
քրթմնջում էր ատամների միջից, յետոյ  
վեր էր թռչում մահճակալից եւ սկսում  
էր մեծ քայլերով մանգալ սենեակումը:  
Այդ ամէնը տարօրինակ բաներ էին եւ  
ինձ վերայ ահ էր գալիս, երբ մտածում  
էի դորա վերայ: Ինձ թւում էր, թէ  
ժակը խելագարուում էր:

Երբ ես տեսայ այդ երեկոյեան, որ ժա-  
կը երկու անգամ բանալիով դուռը փա-  
կեց, այն բոպէին իմ միտքս եկաւ նորա

խելագարութիւնը եւ այն ժամանակը սար-  
սափ եկաւ վերաս: Խեղճ ժակ, նա ոչինչ  
չնշմարեց, բռնեց իմ ձեռքը եւ ասաց.

— Դանիէլ, ես քեզ մի բան թէտք է  
ասեմ: ազնիւ խօսք տո՛ւր, որ ոչոքի չես  
ասի:

Ես նոյն բոպէին հասկացայ, որ ժակը  
չէ խելագարուել եւ ես պատասխանեցի.

— Ազնիւ խօսք եմ տալիս:

— Իե՛հ, ահա՛... դու չգիտես... կամաց...  
Դանիէլ, ես մի պոյէմայ եմ գրել, մի մեծ  
պոյէմայ:

— Պոյէմայ, ժակ պոյէմայ ես գրել,  
դո՛ւ...:

Պատասխանի տեղ ժակը դուրս քաշեց  
իւր բաճկոնի տակից մի ահագին կարմիր  
տետրակ, որ ինքն էր կազմել, եւ որի  
վերայ գրուած էր ինչքան կարելի է գե-  
ղեշիկ:

«Ո՛հ Հաւատ, հաւատ:

Պոյէմայ տատերկու երգով:

Յօրինեց

ժակ էյսսետր:»

Այդ մի այնպիսի սքանչելի ու երեւե-



լի բան էր՝ որ մինչ անգամ՝ գլուխս սկըսեց պտտուելի։

Մտածեցէք... Թաղը, իմ եղբայր Թաղը, մի տասերեք տարեկան տղայ՝ Թաղը, որի դէմքից անպակաս էին արցունքները եւ, որի ամէնօրուայ զբաղմունքը տետրակներ սոսնձելն էր՝ գրել է մի պոյէմայ «Ո՛հ Հաւաս' ար, Հաւաս' ար»։ պոյէմայ տասերկու երգով։

Եւ ոչ ոք այդ չգիտէր։ Նորան դեռ եւս ուղարկում էին կանանչեղէն ծախողների մոտ զամբիւղը ձեռքին։ Հայրս էլ առաջուանից շատ էր գոռում նորա վերայ։ «Թակ՝ դու սուանակ ես»։ Ա՛հ, իմ խեղճ էյսսետ (Թակ)։ Ի՛նչ ուրախութեամբ ես ձեզ կըգրկէի ՚ի բոլոր սրտէ՛, եթէ փոքր ինչ համարձակուել կարողանայի. բայց ես չհամարձակուեցայ։ Մտածեցէք ինքներդ. Ո՛հ Հաւաս' ար, Հաւաս' ար պոյէմայ տասերկու երգով։ Միայն ես պէտք է ասեմ ձեզ, որ այդ տասերկու երգով պոյէման դեռ չէ վերջացած։ Նորա մէջ գրուած էին միայն առաջին երգի սկրդբնական չորս տողերը։ Բայց ինչպէս ձեզ

յայտնի է, այդպիսի գործերում սկիզբն է ամէնից դժուարը, եւ ինչպէս հաստատ ձայնով ասում էր էյսսետը (Թաղը). «Երբ արդէն գրուած են առաջին չորս տողերը, մնացածները դատարկ բաներ են, այդ արդէն ժամանակի գործ է։

Ահա այդ չորս տողերը։ Ես ձեզ ներկայացնում եմ այնպէս, ինչպէս այն երեկոյեան տեսայ, արտագրած մեծ տպագրական տառերով կարմիր տետրակի առաջին երեսի վերայ։

«Ո՛հ, Հաւաս' ար, Հաւաս' ար,

Ինչ սրբազան խօսք,

Մեղմ ու անոյշ ձայն,

Մխիթարութիւն մինչ գերեզման։»

Մէք ծիծաղի. նա շատ էր չարչարուել դորա վերայ։ Բայց այդ դատարկ բաները Թաղը չկարողացաւ մինչեւ վերջը տանել։ Ի՛նչ անես, Պոյէմաները ինչպէս եւ աշխարհիս երեսին եղած բաները ունին իրանց ճակատագիրը։ Եւ «Ուր Հաւաս' ար, Հաւաս' ար» տասերկու երգով պոյէման երբէք չպէտք է լինէր տասերկու երգով։ Ի զուր բանաստեղծը աշխատում էր բոլոր ու-

Ժող. գործը չորս տողից առաջ չէր գր-  
նում: Վերջապէս խեղճ երեխան յուսա-  
հատուելով, դէն ձգեց իւր պոյէման՝ եւ  
այն օրից արցունքները կրկին սկսուեցան  
եւ սոսնձով լցրած փոքրիկ ամանները նո-  
րից երեւեցան կրակի առաջ: ... Կարմիր  
տետրակը նոյնպէս ունէր իւր ճակատա-  
գիրը:

Ժակը ինձ ասաց.

— Վէր առէք գուք ձեզ համար եւ  
արէ՛ք, ինչ կամենաք: Գիտէք ի՞նչ արի  
ես. ես սկսեցի նորա մէջ գրել իմ՝ ոտանա-  
ւորները: Ոտանաւորներ հեղանակութիւն  
Թղուկի: Ժակի սէրը փոխանցուեցաւ իմ  
մէջ:



Ե.

**Կ Բ Կ Ի Ն Գ Ո Ր Ծ Ա Ր Ա Ն Ը:**

Բայց այժմ ընթերցողի թոյլաւութեամբ,  
թողնենք Թղուկին առանաւորներ յօրինել  
եւ յանկարծակի չորս, հինգ տարի անց  
կենանք նորա կեանքից: Ես շտապում եմ  
անցնելու դէպի մի տարուայ գարունը,  
որ մինչեւ այժմն էլ մտաբերում են էյս-  
սետների ընտանիքում: Ամէն ընտանիքում  
լինում են անմոռանալի ժամանակներ եւ  
դէպքեր: Բացի գորանից՝ ընթերցողը չի  
կորցնի ոչինչ այն բանից, որ ես լռու-  
թեամբ անց կրկենամ իմ կեանքի այս  
մասը որովհետեւ ամէն բան նոյնն էր, ինչ  
որ առաջ: Անյաջող գործերը, բնակարան-  
ները որոնց գինը չէր վճարուած, աղ-

մուկ ըրաճրացնող պարտատէրերը, գրաւ դրուած արծաթեղէնները, մօրս աղամանդները, որոնք ծախուած էին չնչին գնով, պատուած սաւաններն ու վարտիքները, ամենայն տեսակ զրկանքները եւ անարգութիւնները, դռնապանների յանդունգն զանգահարութիւնը ու ժպիտները, պարտքերը, նոցա պահանջները եւ... եւ... եւ...: Ահա՛, եկաւ գարունը: Այդ տարին ԹՊՈՒԿը վերջացնում էր իւր փիլիսոփայութիւնը: Որքան մտաբերում եմ, դա մի մեծամիտ երիտասարդ էր, որ առանց կատակի իրան փիլիսոփայ եւ բանաստեղծ էր կարծում: Նա հասակով մի ճանապարհորդական կօշիկից մեծ չէր, նորա գէմքի վերայ մօրուքի ու բեխերի հետք անգամ չէր երեւում:

Մի առաւօտ, երբ այս երիտասարդ փիլիսոփան պատրաստուել էր ուսումնարան գնալու, Պ. Էյսսետը կանչեց նորան խանութը եւ հազիւ թէ խեղճը ներս մտաւ, իսկոյն նա ասաց նորան կատաղի գէմքով:

— Դանիէլ, գրքերդ վառարանի մէջ

ձգիր, դու այլ եւս ուսումնարան չես գրնալու: Այս ասելով պ. Էյսսետը սկսեց խանութումը յետ ու առաջ գնալ մեծ բայլերով, առանց մի ուրիշ բան ասելու: Նա երեւում էր, որ յուզուած էր եւ ԹՊՈՒԿն էլ իւր կողմից վախեցաւ: Երկար լռութիւնից յետոյ հոյրը ասաց.

— Դանիէլ, որդեանկս, ես քեզ պէտք է յայտնեմ մի անախորժ լուր... այն, շատ անախորժ. մենք ամէնքս պէտք է միմեանցից բաժանուենք: Այդ խօսքերը ընդհատուեցան հեծկտանքով, ծանր հեծկտանքով, որ լսուեցաւ դրան ետեւը:

— Ժակ, աւանակ ես, աղաղակեց պ. Էյսսետը, առանց շուր գալու ու յետոյ շարունակեց:

— Երբ մենք եկանք Վիոն վեց տարի սորանից առաջ, յեղափոխիչներից քանդուած, ես յոյս ունէի որ աշխատանքով ու խնայողութեամբ կարող եմ մեր դրութիւնը լաւացնել. բայց այդ ինձ չյաջողուեցաւ: Ես խրուեցայ պարտքերի մէջ: Այժմ մենք վերին աստիճանին ենք հասել: Որպէս զի մի կերպով դուրս գանք

այդ վիճակից՝ մեզ միայն մի բան է մը-  
նում անել, այն է՝ վաճառել ամէն բան՝  
ինչ որ ունինք եւ զանազան տեղեր գը-  
նալ: Այժմ դոք բաւական մեծացել էք  
եւ կարող էք ձեզ համար ապրուստ ձա-  
րել:

Ժակի նոր հեծկլտանքը ընդհատեց պ.  
Էյսսետի խօսքերը. բայց նա այնքան յոգ-  
ւած էր որ մինչ անգամ այժմ չէր կա-  
րող բարկանալ՝ միայն Դանիէլին նշան  
տուեց, որ նա դուռը փակէ, եւ որից  
յետոյ շարունակեց:

— Ահա՛ ինչպէս եմ որոշել այս ամէ-  
նը: Քո մայրը կը գնայ ապրելու առ Ժա-  
մանակ հարաւ իւր եղբոր՝ քո քեռի Բասպ-  
տիստի մօտ. Ժակը կը մնայ այստեղ Լիո-  
նումը, նորա համար գրաւասենեակում  
գործ եմ գտել: Ես գործակատար կը մըտ-  
նեմ գինեվաճառների ընկերութեան մէջ:  
Ինչ վերաբերում է քեզ, խեղճ զաւակս,  
պէտք է որ դու ինքդ ճարես քո տպ-  
րութեանը: Ես ստացել եմ մի էամակ իմ  
բարեկամ վերատեսչից՝ նա քեզ տալիս է  
ուսուցչի պաշտօն:

Ահա՛ կարդա՛:

Թղուկը նամակն առաւ.

— Ինչքան այս նամակից հասկանում  
եմ՝ ասաց նա կարգալով նամակը, Ժա-  
մանակ չ պէտք է կորցնել:

— Այո՛, պէտք է վաղը ճանապարհ  
ընկնել:

— Ես կը գնամ:

Այդ բողբոջին դուռը բացուեցաւ եւ տ.  
Էյսսետը ներս մտաւ խանութը. նորան  
ահով հետեւում էր Ժակը: Նոքա երկու-  
սըն էլ մօտեցան Թղուկին եւ լուռ համ-  
բուրեցին նորան. նոքա նախընթաց օ-  
րուանից գիտէին ամէն բան:

— Նորա իրերը պատրաստեցէք, ասաց  
Պ. Էյսսետը, նա վաղը գնում է:

Մայրը ծանր «ախ» քաշեց Ժակը եր  
կու անգամ փղձկաց եւ դորանով բանը  
վերջացաւ: Անբաղտութիւնը սովորական  
երեւոյթ էր դարձել մեր ընտանիքի հա-  
մար:

Միւս առաւօտը ամբողջ ընտանիքը ճա-  
նապարհ էր ձգում Թղուկին: Հանգա-  
մանքների տարօրինակ բերմունքով շոգե-

նաւը այն միեւնոյնն էր, որի վերայ մենք եկանք Լիոն վեց տարի առաջ: Փենիէ նաւապետը եւ Մոնթելմար խոհարարը նոյնպէս նաւի վերայ էին: Մենք մտաբերում էինք Աննայի անձրեւանոցը. Ռոբինզոնի թութակը եւ մի քանի ուրիշ գէպքեր մեր ճանապարհորդութիւնից: Այս յիշողութիւնները մի քիչ կենդանացրին՝ ամէնքին եւ մինչ անգամ մի տըխուր ժպիտ երեւեցաւ մօրս երեսին:

Յանկարծ զանգակը հնչեց: Պէտք էր բաժանուիլ: Թզուկը դուրս ցատկեց իւր բարեկամների դրկից եւ այրաբար անցաւ կամուրջը:

— Խելօք կ'աց, ձայն տուեց հայրս:

— Չհիւանդանաս, զգո՛յշ կաց, առայ մայրս:

Ժակը նոյնպէս ուզում էր մի բան ասել, բայց արտասուքը թոյլ չտուեց:

Ինչ վերաբերում է Թզուկին, նա լայ չէր լինում: Ինչպէս ես պատիւ ունէի ձեզ յայտնելու, որ նա մի ճշմարիտ փիլիսոփայ էր, իսկ փիլիսոփաների գէմքին սյգպիսի քնքշութիւնները չէին սազում:

Նա սիրում էր նոցա, այն սիրելի էակներին, որոնց նա թողնում էր այնպեղ մառախլապատ եզերքի վերայ, նա կը զոհէր նոցա համար իւր կեանքը, մինչեւ արեան վերջին կաթիլը: Բայց... Շոգենաւի շարժումն, ճանապարհորդութեան տպաւորութիւնները, ցնծութիւնը Լիոն թողնելու, ուրախ եւ միանգամայն հպարտ միտքը, թէ նա վերջապէս հասակ առած մարդ է, տղամարդ է, ճշմարիտ տղամարդ է, որ այժմ կարող է ճանապարհորդել մէնակ եւ ինքը պէտք է ճաբի իւր ապրուստը—այդ ամէնը գինովացածի պէս արեց Թզուկին. պտտւում էր նորա գըլուխը եւ մոռացնել էր տալիս այն երեք սիրելի էակներին, որոնք լալիս էին այնտեղ, կանգնած Ռոնի գետեղրի վերայ: Ո՛չ, այն երեքը փիլիսոփաներ չէին: Նոքա նայում էին հեռուում վազող շոգենաւի վերայ, չհեռացնելով նորա վերայից քնքշութեամբ եւ վշտով լցուած աչքերը: Նա արդէն անհետանում էր հեռաստանումը, արդէն ծխնելոյզից դուրս եկող ծուխը հազիւ էր երեւում, բայց նոքա

աղաղակում էին. «Մնան բարեալ, Մնան բարեալ», եւ շարժում էին իրանց թաշկինակները:

Այդ ժամանակ փիլիսոփան յետ ու առաջ էր գնում տախտակամածի վերայ, ձեռքերը գրպաններում դարսած եւ գլուխը կորացրած: Նա սողում էր նայելով կանանց վերայ նոցա գլխարկների տակից, նայում էր, թէ ինչպէս էր բանում մեքենան եւ ման էր գալիս ուտերը բարձրացրած, աւելի բարձր երեւալու համար եւ թքում էր, որքան կարելի է հեռու: Նա շատ գոհ էր իրանից: Դեռ Լիէնին\*) չհասած նա արդէն կարողացել էր խոհարար Մոնթելմարին եւ նորա երկու օգնականներին յայտնել, թէ ինքը համալսարանումն էր եւ այժմ ինքն է պահում իւր գլուխը:

Մանգալով շոգենաւի վերայ, մեր փիլիսոփան յանկարծ դիպաւ պարանների շրջանին, որ ընկած էր մեծ զանգակի

\*) Մի փոքրիկ քաղաք է Ռոնի վերայ, Լիոնից մի քիչ հարաւ: Ծ. Թ.

մօտ ուղիղ այնտեղ, ուր վեց տարի առաջ նստում էր Ռոբինզոնը եւ անց էր կացնում իւր երկար ժամերը թուխակի հետ: Այդ պարանի շրջանը շարժեց նորա ծիծաղը եւ նորան մի փոքր կարմրացրեց:

— Ինչքան ծիծաղալի պէտք է թուէի ես, մտածում էր նա, քաշտալով ամէն տեղ այս ներկած կապոյտ վանդակը եւ այս անմիտ թուխակին:

Խեղճ փիլիսոփայ. նա չէր կարծում, որ իւր ամբողջ կեանքումը պէտք է քաշ տայ իւր յետ ծիծաղալի եւ կապոյտ գոյնով ներկուած վանդակը, որ մտածմունքի եւ ցանկութեան գոյն է եւ կանաչ գոյնի թուխակը, որ յուսոյ գոյնն է:

Աւճի. երբ ես գրում եմ այս տողերը, այս ժամանակ խեղճ երեխան դեռ գնում է իւր ահագին կապոյտ վանդակով. միայն վանդակը օրէց օր կորցնում է իւր կապոյտ գոյնը, իսկ վանդակի կանաչ թուխակը, ահ շատ ժամանակ է որ նա կիսով չափ իւր գոյնը կորցրել է:

Իւր մայրենի քաղաքը գալիս, Թզու-

կի առաջին գործն էր գալ ճեմարանը: որտեղ բնակուամ էր վերատեսուչը:

Վերատեսուչը՝ պ. Էյսսետի բարեկամը, մի բարձր գեղեցիկ, նիհար, աշխոյժ եւ համակրելի ծերունի էր, որին առաջին անգամ իսկ աննելիս կրհաւանէիր: Նա շատ քաղցրութեամբ ընդունեց պ. Էյսսետի որդուն, բայց երբ նա մտաւ գրասենեակը՝ բարի ծերունին չկարողացաւ զսպել իւր զարմանքը:

— Տէր Աստուած, ի՜նչպէս փոքր է բացականչեց նա: Ճշմարիտ որ Թզուկը շատ կարճահասակ եւ միեւնոյն ժամանակ շատ նուազ էր, եւ մանկական ձայնով ու դէմքով:

Վերատեսչի բացականչութիւնը վախեցրեց նորան «Նա այժմ չի կամենայ ընդունել» մտածեց նա եւ սկսեց ամբողջ մարմնով դողալ:

Բարեբաղտաբար վերատեսուչը կարծես թէ հասկանալով՝ թէ ինչ է կատարում այդ փոքրիկ ուղեղի մէջ՝ ասաց.

Մօտեցիր ինձ, բարեկամս: Այդպէս մենք քեզ ուսուցիչ պէտք է շինենք: Քո

տարիներումը այդ հասակովը եւ այդ դէմքով քեզ համար աւելի դժուար կրլինի, քան թէ մի ուրիշի համար...: Բայց ի՜նչ անենք: Դու պէտք է ապրուստ ճարես, մենք կ'աշխատենք քեզ, ինչքան կարելի է, լաւ տեղ տալ: Առաջ մենք քեզ կը տանք աւելի հեշտ գործ: Նս քեզ կողարկեմ մի ուսումնարան, որ գտնուում է Սարլանդումը, մի քանի մղոն այստեղից հեռու: Այնտեղ դու գործիդ կ'ընտելանաս, կը մեծանաս, տղամարդ կը դառնաս, մօրուքդ դուրս կը գայ եւ, երբ մօրուքդ դուրս կը գայ, այն ժամանակ կը տեսնենք, թէ ի՜նչ կանենք. Այդ խօսքերն ասելիս, վերատեսուչը գրում էր Սարլանդի ուսումնարանի տեսչին, եւ երբ վերջացրեց, նամակը տուեց Թզուկին եւ խորհուրդ տուեց, որ նոյն օրն եւ ի՞թ ճանապարհ ընկնի: Նա տուեց նորան նոյնպէս մի քանի օգտակար խորհուրդներ, բաղցրութեամբ նորա այտերից բռնեց եւ խոստացաւ նորան բարձի թողի չանել: Թզուկը դուրս եկաւ բոլորովին բաղդաւոր: Նա վազեց ցատկելով միջանի աստիճաններ-

րից ճեմարանի հինօրեայ վերելքներով  
եւ ժամանակ չկորցնելով՝ գնաց Սարլանդ՝  
ուղեւորութեան տոմսակ գնելու:

Կառքը գնում էր կէս օրին: Մնում էր  
դեռ եւս երկու ժամ: Թզուկը դորանից  
օգուտ է քաղում: որ անցկենայ մի քա-  
նի անգամ հրապարակի վերայ եւ երեւայ  
իւր համաքաղաքացիներին: Կատարելով  
այդ առաջին պարտքը, նա մտածում էր  
նորա վերայ, թէ որտեղ պէտք է նախա-  
ճաշիկ անի, որ ձեռնտու լինի իւր քսա-  
կին: Աւղիղ զօրանոցների հանդէպը նա  
տեսնում է մի փոքրիկ մաքուր պանդոկ  
փայլող ցուցանակով:

### Հ Ի Ի Ր Ա Ն Ո Յ

«Ֆրանսիացի ճանապարհորդ»

— Կարծես այս իմ ուզածն է, մտա-  
ծում է նա եւ մի րոպէ տատանուելուց  
յետոյ, որովհետեւ այս առաջին անգամն  
է, որ Թզուկը պանդոկ է մտնում: Վճռո-  
ղական դէմքով դուռը բաց է անում:

Պանդոկը դարտակ էր: Պատերը ներ-

կած էին սպիտակ գոյնով. մի քանի կաղ-  
նեայ սեղաններ... Մի անկիւնում մի քա-  
նի ձեռնափայտեր են դրուած պղնձէ ծայ-  
րերով եւ որոնք զարդարուած էին գոյն  
զգոյն կապերով (ՃԱԽԵՅ), խանութումը  
սեղանի մօտ նստած էր մի հաստիկ մարդ  
եւ խումիացնում էր գլուխը բաց գլքի  
վերայ դրած:

Ե՛ր, ո՛վ կայ այնտեղ, աղաղակում է Թը-  
զուկը եւ խփում է սեղանին իւր ձեռ-  
քով: Ինչպէս մի մշտական յաճախող:

Բայց հաստիկ մարդը չէ արթնանում:  
Իսկ միւս սենեակից դուրս է վազում  
տանտիկինը: Տեսնելով այն հիւրին, նա  
բարձր ձայնով աղաղակում է:

— Աստուած իմ: Պ. Իանիէ՛ր, դուք էք:

— Աննա, իմ պառաւ Աննա, պատաս-  
խանում է Թզուկը եւ գրկախառնում են  
միմեանց:

Այո՛, դա՛ տ. Աննան է, պառաւ Ան-  
նան, էյստետների նախկին աղախինը, եւ  
այժմ պանդոկապետուհի է մարդու գնա-  
ցած այն հաստիկ մարդուն, որ խռըմ-  
փացնում էր սեղանի վերայ: Եւ ի՛նչքան



ուրախ է պառաւ Աննան. ինչպէ՛ն նա բազումուր է, որ տեսնում է պ. Դանիէլին ինչպէս նորան համբուրում է. ինչպէ՛ն գրկում եւ սեղմում է իւր բազուկներն մէջ. . . :

Այդ ժամանակ այն հաստիկ մարդը արթնանում է: Առաջին ընդհանրական զարմացած է երեւում այն սիրալիր ընդունելութեան վերայ, որ անում է իւր կինը այն անծանօթ երիտասարդին: Բայց երբ նա իմանում է որ այդ երիտասարդը պ. Դանիէլ է յստան է, ժան Պէյրօլը ուրախութիւնից բոլորովին կարմրում է եւ շտապով գրկում է իւր երեւելի հիւրին:

— Նախաճաշե՛լ էք դուք պ. Դանիէլ:

— Դեռ եւս ո՛չ, բարի՛ Պէյրօլ. . . : Եւ այդ պատճառաւ էլ հէնց եկայ այստեղ: Տէ՛ր իմ Աստուած. Պ. Դանիէլը դեռ չէ նախաճաշե՛լ: Ե՛նչ, շո՛ւտ: Պառաւ Աննան վազում է իւր խոհանոցը. ժան Պէյրօլը վազում է ներքնատունը, որ յաճախողների ասածին նայելով՝ վատ չէ:

Մի ընդհանրական բան պատրաստ է, սեղանի վերայ սփռոցը ձգուած է, սպաս-

ները դրուած: Թղուկին մնում է միայն նստել եւ ուտել, Սեղանի ձախ կողմը պառաւ Աննան կտրատում է նորա համար բարակ հացի կտորները, այն հաւկիթները ուտելու, որ հաւը ածել էր սուաւօտը: Աջ կողմից ժան Պէյրօլը լցնում էր նորա համար հին գինին, որ փայլում էր բաժակի մէջ թանկագին աղամանդի նրման: Թղուկը բոլորովին երջանիկ է: Նա միեւնոյն ժամանակը եւ պատմում է, ինչպէս նա մտաւ համալսարանը, ինչպէս նա այժմ կարող է ազնիւ ճանապարհով մի կտոր հաց ճարել իւր համար: Եւ ինչ ղէմքով նա ասաց՝ ազնիւ ճանապարհով ճարել էր իւր համար մի կտոր հաց: Պառաւ Աննան բոլորովին խելքահան էր լինում ուրախութիւնից: ժան Պէյրօլը գործին մի քիչ սառն էր վերաբերում: Նորա կարծիքով բոլորովին բնական բան է, որ պ. Դանիէլը կարող է իւր համար հաց ճարել. պ. Դանիէլի հասակումը նա, ժան Պէյրօլը, արդէն հինգ տարի էր, որ թափառում էր աշխարհիս երեսին եւ իւր ընտանիքը նորա վերայ մի կողմէ կ'անգամ

չէին մխտում: Այո՛, պ. Դանիէլի հասակումը: Ժան Պէյրոլը վաղուց արդէն տրդամարդ էր:

Իհարկէ այս բոլոր դատողութիւնները հիւրասէր տանուտէրը անում էր ինքն իրան: Կարելի է հաւասարեցնել ժան Պէյրոլին Դանիէլ Էյսսետի հետ...: Պառաւ Աննան այդ երբէք թոյլ չէր տայ: Թզուկը շարունակում է իւր գործը՝ նա պատմում է, ուտում է, խմում է եւ փոքր առ փոքր ոգեւորում է. նորա աչքերը փայլում են եւ այտերը կարմրել են: Ե՛յ տանուտէր, կարելի է՞ մի քանի գաւաթ բերել: Թզուկը կամենում է «կենաց» խմել: Ժան Պէյրոլը գաւաթները բերում է եւ ամէնքը սկսում են խմել: Առաջ խմում են ա. Էյսսետի, յետոյ պ. Էյսսետի, յետոյ ժակի, յետոյ Դանիէլի, յետոյ պառաւ Աննայի, նորա ամունու, յետոյ խմում են համալսարանի կենացը...: Ելի ում կենացն է մնացել: Երկու ժամը աննշմարելի կերպով անցնում է կենացների եւ խօսակցութեան մէջ:

Խօսում են տխուր անցեալի եւ բազ-

դաւոր ապագայի վերայ՝ մտաբերում են գործարանը, Լիօնը, Ֆոնարեան փողոցը եւ խեղճ աբբային, որին ամէնքը այնպէս սիրում էին...:

Վերջապէս Թզուկը վեր է կենում, արդէն ժամանակ է գնալու:

— Այդպէս շո՛ւտ, տխուր կերպով հարցնում է Աննան: Թզուկը ներողութիւն է խնդրում: Նա գնալուց առաջ պէտք է մի այցելութիւն անի՝ մի այնպիսի այցելութիւն, որ անպատճառ պէտք է անի:.. Ափսո՛ս, ի՛նչ լաւ էր՝ դեռ ի՛նչքան պէտք էր հարցնել ու պատմել...: Բայց եթէ ոչ մի տեսակ չէ կարելի եւ պ. Դանիէլը պէտք է այցելութիւն անի, այն ժամանակը նորա «Փրանսիայի ճանապարհորդի» բարեկամները նորան երկար չէին պահի:

«Աստուած բարի՛ ճանապարհ տայ, պ. Դանիէլ, Տէր ընդ քեզ»: Ժան Պէյրոլը իւր ամուսնու հետ ճանապարհ էր ձգում նորան իրանց օրհնանքներովը եւ բարեմալութիւններովը մինչեւ փողոցի ծայրը:

— Բայց գիտէ՞ք, թէ Թզուկը ո՛ւմ պէտք է այցելէր գնալուց առաջ:

Գործարանի՛ն: Այն գործարանին, որ նա այնպէս սիրում էր եւ, որի վերայ լայիս էր, նա ուզում էր մի անգամ եւս տեսնել այգին, գործատները, բաղեզները, այն բոլոր սիրելի բարեկամներին, իւր առաջին երջանիկ օրերի բոլոր ուրախութիւնները...: Ի՛նչ անես. մարդուս սիրտը այդպէս է. նա ունի իւր թերութիւնները, նա սիրում է, ինչ որ կարող է սիրել, մինչ անգամ ծառերը, քարերը, գործարանը...: Բացի գորանից, ինչպէս պատմութիւնը ասում է, ինքն ճերուների Ռոբինզոնը, Անգղիա վերադառնալուց յետոյ նոյնպէս կամեցաւ նորից գնալ ծովը եւ անցաւ, Աստուած գիտէ, քանի հազար վերստ, որ մի անգամ տեսնէ իւր անբընակ կղզին:

Ուրեմն ոչինչ զարմանալի բան չկար, որ Թզուկը նոյն նպատակով վճռեց տեսնել իւր ծննդավայրը:

Արդէն հինօրեայ ծառերը տների ետեւից ճանաչեցին իրանց հին բարեկամին, որ շտապում էր նոցա տեսնելու: Դեռ հեռուից նոքա ուղարկում էին նո-

րան իրանց ողջոյնը եւ մօտենալով իրար կարծես թէ ասում էին միմեանց. «Ահա Դանիէլ է յստետը, Դանիէլ է յստետը եկաւ»: Եւ նա շտապում է, շտապում է...: Ահա նա մօտենում է գործարանին, բայց յանկարծ ապշած կանգնում է...:

Նորա առաջեւ բարձրանում են բարձրը մոխրագոյն պատեր, ոչ մի տեղ կանաչի նշոյլ չկայ, չկայ ոչ մի ժանկովարդի ոտ կամ նռնենի...: Ո՛չ պատուհաններ կան, ո՛չ էլ դռնակներ. չկան եւ գործատները...:

Միայն մի մատուռ է երեւում պատերի ետեւից, մի հաստ կարմիր խաչաքար դրների վերայ եւ չորս կողմը կատինական վերնագրեր:

Ո՛հ անբաղդութիւն: Գործարանը այլ եւս գործարան չէ. նորան կուսանաց են շինել եւ տղամարդիքը իրաւունք չունին մուտք գործելու այնտեղ...:



The first part of the book is a history of the  
 church in the city of London, from the  
 foundation of the city to the present time.  
 It is divided into three parts, the first  
 of which is a history of the city from  
 the foundation of the city to the  
 year 1500. The second part is a  
 history of the city from the year 1500  
 to the year 1700. The third part is  
 a history of the city from the year 1700  
 to the present time. The book is  
 written in a plain and simple style,  
 and is very interesting and useful.  
 It is a valuable work for every  
 person who is interested in the  
 history of the city of London.



The right page of the book is mostly blank, with some faint, illegible markings and a large, faint blue smudge or stain in the lower right quadrant.

523  
524  
525

2013

0004754  
0004755  
0004756

ՀՀ Ազգային գրադարան



NL0004756

ՀՀ Ազգային գրադարան



NL0004755

ՀՀ Ազգային գրադարան



NL0004754

